ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

01.09.2018թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյանը, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մադաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Ֆակուլտետի աշխատանքային պլանի (ըստ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի) և գիտական խորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի(2018-19 ուս. տարի) քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. 2018-2019 ուս. տարվա ֆակուլտետի դեկանատի աշխատանքային պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. 2018- 2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. ***Լսեցին - ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում:***

Գ. Ավետիսայնը նախ հիշեցրեց գիտական խորհրդի ձևավորման կանոնակարգային պահանջները, ըստ որի ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմվում է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Ընդ որում խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ

անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50%-ը: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը: Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով: Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկանուծությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները: Գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են, որոնց ընտրությունն իրականացվում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Այնուհետև Գ. Ավետիսյանը ներկայացրեց գիտական խորհրդի կազմը, առաջարկեց քննարկել և ներկայացնել հաստատման հետևյալ կազմով.

1. Ավետիսյան Գայանե դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ,
2. Ալեքսանյան Անժելա խորհրդի քարտուղար,
3. Հովհաննիսյան Գուրգեն տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
4. Միքայելյան Միքայել ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ,
5. Ասիլբեկյան Պավել տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
6. Սարիբեկյան Անուշ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս, «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար
7. Ուլիխանյան Ալինա տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար
8. Պոտոսյան Ակսել տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ
9. Մարգարյան Հասմիկ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ
10. Եգանյան Արփինե ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս,
11. Թամրազյան Տիգրան Տավուշի մարզի մարզպետի տեղակալ
12. Վարդումյան Սոս - «Արեգակ» ՈՒՎԿ-ում որպես վարկային գործակալ,
13. Մադաթյան Լուիզա ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
14. Թիրաբյան Տիգրանուհի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,

15.Մելիքսեթյան Մարիամ «Սերվիս» մասնագիտության III կուրսի ավագ,
16.Ղարախանյան Անի «Սերվիս» մասնագիտության II կուրսի ավագ

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Հ. Մարգարյանը:

Որոշեցին - ընդունել դեկանի կողմից ներկայացված ֆակուլտետի գիտխորհրդի կազմը և ներկայացնել հաստատման:

2. Ֆակուլտետի աշխատանքային պլանի (ըստ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի) և գիտական խորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի(2018-19 ուս. տարի) քննարկում և հաստատում:

Գ. Ավետիսյանը նշեց, որ կազմվել է ֆակուլտետի միջնաժամկետ աշխատանքային պլան(ըստ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի), որտեղ ներառված են այն ռազմավարական խնդիրները, որոնք պետք է իրականացնել 2018-2020թթ-ին: Հիմք ընդունելով աշխատանքային պլանը կազմվել է ֆակուլտետի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա նիստերի պլան-ժամանակացույցը:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարվա կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի միջնաժամկետ աշխատանքային պլանի և գիտխորհրդի 2018-2019 ուս. տարվա նիստերի պլան-ժամանակացույցի նախագծերը /նախագծերը կցվում են/:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը,Գ. Հովհաննիսյանը, Ս. Վարդումյանը:

Որոշեցին – հավանության արժանացնել ֆակուլտետի միջնաժամկետ աշխատանքային պլանը և գիտխորհրդի 2018-2019 ուս. տարվա նիստերի պլան-ժամանակացույցը և ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

3. Լսեցին- Դեկանատի կազմի քննարկում և հաստատում / Զեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկանը ներկայացրեց դեկանատի կազմը, առաջարկեց քննարկել և հաստատել.

Ավետիսյան Գայանե	Դեկան ժ/պ
Հովհաննիսյան Գուրգեն	տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
Միքայելյան Միքայել	ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ,
Ասիլբեկյան Պավել	ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
Ալեքսանյան Անժելա	խորհրդի քարտուղար,
Մադաթյան Լուիզա	ֆակուլտետի ՈՒԽ նախագահ
Թիրաբյան Տիգրանուհի	Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Եգանյանը:
Որոշեցին – հաստատել ֆակուլտետի դեկանատի կազմը

4. Լսեցին - 2018-2019 ուս. տարվա ֆակուլտետի դեկանատի աշխատանքային պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում:

2018-2019 ուս. տարվա դեկանատի աշխատանքային պլան-ժամանակացույցը ներկայացրեց դեկանի ժ/պ Գ. Ավետիսյանը /աշխատանքային պլանը կցվում է/:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Ուլիխանյանը:

Նրանք նշեցին, որ դեկանի ներկայացրած դեկանատի աշխատանքային պլանը կնպաստի ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին -հաստատել ֆակուլտետի դեկանատի աշխատանքային պլանը:

5. Լսեցին - 2018-2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում /Զեկ.Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը.

1. Գ. Ավետիսյան	դեկան, մանդատային հնաձնաժողովի նախագահ,
2. Պ. Ասիլբեկյան	ֆակուլտետի արհմիության նախագահ, մանդատային հանձնաժողովի քարտուղար,
3.Ա. Սարիբեկյան	ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս,

4. Լ. Մաղաթյան ֆակուլտետի ՈԽ նախագահ
5. Տ. Թիրաբյան ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Որոշեցին - հավանություն տալ ներկայացված մանդատային հանձնաժողովի կազմին և ներկայացնել տնօրենության հաստատմանը:

6. *Լսեցին- 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի դասատախտակի հաստատումը.*

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակի դասատախտակի վերջնական տարբերակը: Նա տեղեկացրեց, որ դասատախտակը կազմելիս հաշվի է առնվել առարկաների արդյունավետ համադրումը ըստ օրերի: Միաժամանակ այն քննարկվել է առանձին դասախոսների հետ: Զուգադիպություններից խուսափելու համար համեմատվել է նաև մասնաճյուղի այլ ֆակուլտետների դասացուցակների հետ:

Որոշեցին - հավանություն տալ դասատախտակին և ներկայացնել տնօրենության հաստատմանը:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*